

ԱՎԵՏՈՒՆԻ

Երբ կայծակը  
ժայռաբախում է

ՆԱՅԵՏՆԱՏ



891.99

4-75

ԱՁԱՏ ՎՇՏՈՒՆԻ

ՆՈՒՎԱԿԱՆ Է 1961 Ք.

1774  
A  $\frac{I}{6099}$

ԵՐԲ ԿԱՅԾԱԿԸ  
ՓԱՅԼԱՏԱԿՈՒՄ Է

(Վ. Ի. Պ. Ե. Բ. Գ.)



Ցուքերը նրա թափվում են ներքև,  
Ո՞վ է հողն այստեղ արյունով ներկել,  
Ինչո՞ւ գիշակեր հավքն է թափառում:  
Գետնի երեսին շարված իրար մոտ  
Դիակույտեր կան անշարժ ու արնոտ:

Մաների ներքև՝ առվի եզերքին,  
Արյունաշաղախ, կույտ-կույտ, իրար քով  
Թափվել են մարդկանց դիակներ շարքով,  
Ընկել են քանի՜ ծեր, մանուկ և կին:  
Մայրն է սպանվել մանկիկը գրկին,  
Մոր կրծքի վրա մանկիկն է խոցված,  
Քանի՜ մայրեր կան արյունով օծված  
Եվ պատանիներ ու ծերեր կրկին:  
Դիակների կույտ՝ մայր, մանուկ և ծեր—  
Գերման գնդացիներն է նրանց հնձել:

Լուսինը տոգույն վայր է կռանում,  
Նայում զոհերին անհաս բարձունքից,  
Թրջվում է գետինն արծաթ արցունքից—  
Լուսինն է լալիս կապույտ վրանում:  
Նայում է կարծես ու միտք է անում—

Մ'իթե՞ այս մանկանց և այս մայրերին,  
Այս անմեղ մարդկանց մորթող վայրենիին  
Կրտւմ է վսեմ մարդկային անոռն:  
Շրջել է լուսինը հավերժ արթուն,  
Այսքանս պիղծ բնավ չի տեսել մարդուն:

Լուսինը դեռ լուռ ներքև է նայում  
Հոգնած աչքերով և կիտահանգած:  
Դիակույտերից դուրս սողաց հանկարծ  
Մի փոքրիկ տղա՝ շորերին արյուն:  
Վեր ելավ կանգնեց այս մահավայրում  
Փոքրիկ ոռւտ տղան՝ հայացքով մոլոր,  
Նայում է սարսամ, դիտում շորս բոլոր,  
Եվ մի՞ խոր կսկիծ իր սիրտն է այրում:  
Կանգնել է վանյան ու ծանր է շնչում:  
Դողում է, հեռւմ, ի՞նչ է շշնջում:

## 2

Վանյայի հոգում իջավ սև գիշեր,  
Նա ցնցող անցքերն սկսեց հիշել:—  
Գերման գինվորներն ընկած տնետուն

Գյուղացիներին փողոց են նետում:  
Գյուղը լցվել է մանկական ճիշով,  
Լավում են ձայներ նզովքի, լացի,  
Քշում են մարդկանց լկտի քրքիշով  
Սպան ու զինվորը գերմանացի:  
Ու բերին մարդկանց խմբով, մի և մի  
Այստեղ, ուր որ ինքն է կանգնել հիմի:  
Վանյային և մորն էլ բռնի բերին,  
Խառնեցին քշված մարդկանց խմբերին:

Հիշում է Վանյան՝ ժպտում էր հուշիկ  
Մայրիկի գրկում իր քույրն անուշիկ,  
Քույրը Վանյայի՝ թմբլիկ Մուրիչկան —  
Երեք ամսական, լավիկն էր ինչքա՛ն:  
Վանյան կանգնել էր մայրիկի կշտին,  
Մայրը մի ձեռքով բռնել էր նրան,  
Ա՛խ, մայրիկը մեղմ լալիս էր վշտից,  
Մեկ-մեկ նայում էր Վանյայի վրա,  
Ու մերթ դիտում էր կպած իր գրկին  
Ժպտուն, կապտաշյա իր հեգ մանկիկին:  
Վանյան նայում էր իր մայրիկին լավ  
Ու շրիմացավ, փառտնի լաց եղավ:

Եվ հանկարծ լավեց կրակոցի ձայն,  
Հրեղեն կայծեր թռան ու անցան:  
Այդ գնդացիներն էին կտկտում:  
Ու մեռնող մարդիկն էին մղկտում:  
Արդյոք իր մա՛յրն էր ցնցվեց, երեբայ,  
Քո՛ւյրիկն էր ճշաց դառնագին կոծով,  
Այն ո՞վ էր արդյոք իր կողքին նվաց,  
Վանյայի վրա ընկավ հետցով:  
Ու մի ծանրը բեռ ընկել էր վրան  
Եվ մի տաք հեղուկ թրջում էր նրան:  
Ականջների մեջ մի ձայն էր խշշում:  
Թե ինչ պատահեց հետո՝ չի հիշում:

Ընկել էր վանյան դիակների տակ,  
Նրան չէր կպել մահացու գնդակ:  
Ու կամաց կամաց երբ եկավ ուշքի,  
Զգաց իր վրա մի ճնշում ուժգին:  
Ու խարխափելով, կիսաշնչահեղձ—  
Նա հեռու հրեց սառած մի մարմին,  
Դիակույտերի արանքով սահեց  
Կանգնեց, ներկված արյունով կարմիր:  
Եվ փոքրիկ տղան՝ շորերին արյուն,

Կանգնել է ահա այս դաժան վայրում.  
Հուշերը ցնցող ու խոլ շահաշող—  
Գալիս անցնում են մտքի առաջով:

Պատանին հայացքը գետնին հառեց,  
Հայացքը լարեց, նայեց ու ասո՛ւեց:  
Ա՛խ, իր մայրիկին նա տեսավ հանկարծ  
Արյան մեջ պառկած, աչքերը հանգած:  
Եվ կրծքի վրա անգին մայրիկի  
Թարտում է հեղ փոքրիկ Մուրիչկան,  
Խոցել է դնդակն անմեղ մանկիկին,  
Իսկ մայրը մեռել է, մայրը չկա՛:  
Եվ շոքեց Վանյան թախծոտ, դողդողջուն—  
Հարագատների արյան հորդ լճում,  
Ու մրմնջում է մեղմ՝ ձայնով անուժ.  
— Միրելի մայրի՛կ, քույրի՛կ իմ անուշ:

3

Տասներեքամյա մի վտիտ տղա—  
Մազերը խարտյաշ, աչքերը լազուր,  
Գիշեր ուշ ժամին գյուղից դուրս թռավ,

Հեվինն դեպի անտառ է վազում:  
Մի պահ շնչասպառ կանգնում է՝ հետո  
վազում է կրկին նեղ արահետով:  
Այն վտիտ տղան սեղմել է գրկին  
Մի փոքրիկ մանկիկ՝ վիրավոր սակայն,  
Տանում է խամրած իր լամբ քույրիկին,  
Սիրուն քույրիկին երեք ամսական:

Գյուղից շատ հեռու կա մի մեծ անտառ,  
Անտառը լիքն է ահով ու դավով,  
Պարտիզաններն են շրջում անդադար  
Անտառումն այն խիտ ու խորհրդավոր:  
Գերման զինվորներն անտառի կողքից  
Անցնում են, փախչում ոնց որ դժոխքից:  
Նրանք չեն մտնում խորքերն անտառի,  
Անտառից նրանք սոսկում են այնպե՛ս,  
Ռուս պարտիզաններ կան այնտեղ արի,  
Զինված, ահարկու, հանդուգն ու անտես:

Այս ուշ գիշերվա ժամին միամաժ  
Անտառն անհանգիստ խըշտում է, շնչում,  
Ու սվավում են ծառերը կիսմայ

Եվ անցորդ մարդուն վախ են ներշնչում:  
Մի ծառի ներքև՝ անտառի խորքում  
Այն ի՞նչ մարդկային ձայն է մորմոքում:  
Վանյան է նստել նոճենու տակին,  
Քրոջը դրեւ իր ծնկի վրա,  
Օրոր է ասում մեղմ ու սրտագին,  
Շոյելով քնքուշ մազերը նրա:

Վիրավոր քրոջը դգվում է նա,  
Սրտագին հույզով օրոր է ասում,  
Սակայն Մուրիչկան չի ժպտում հիմա,  
Ճերմակ թաթիկներն այլևս չի պարզում:  
Եվ վերնաշապիկը Վանյան իրա  
Հանեց ու ձգեց իր քրոջ վրա.  
— Գիշեր է, ցուրտ է, ծածկեմ քեզ, քույրի՛կ,  
Հանկարծ շմրտես, չհիմա՛նդանաս,  
Քնի՛ր, Մո՛ւրիչկա, քնի՛ր, տիրո՛նի՛կ,  
Վաղ անավոտուն աչքերդ կթանձա:

Ծառերը միննում տարսուռ են և ահ,  
Անտառը լիքն է անթիվ քաջքերով,  
Մացառներն, խսեզ, դազանձ ու ճիվաղ

Սուր ժանիքներով, դեղին աչքերով:  
Բայց Վանյան այլևս չի սոսկա մահից:  
Ոչ էլ գազանից և կամ ճիվաղից:  
Գայլից, բորենուց նա չի վախենա,  
Գազանն ազնիվ է, խղճով, բանական.  
Ավելի վայրագ, չար և անխնա  
Մարդաճիվաղներն են գերմանական:

4

Ժուժը չբացավ ու գիշերն՝ անցավ,  
Անտառն անհանգիստ քնից արթնացավ:  
Ծառերը հովից մեղմ արսփացին,  
Եվ բարևեցին արևին փայլուն:  
Անտառի միջով վաղ լուսաբացին  
Սպառազինված մարդիկ նն բայլում:  
Քայլում են նրանք զգուշ, լուծալն,  
Զեռներին պատրաստ պահած հրաղյան:  
Քայլում են նրանք խիզախ և խոկուն,  
Բայց ահա նրանք կանգ առին, ինչո՞ւ.  
Այն ո՞վ է այնտեղ՝ անտառի խորքում  
Նոճենու ներքև միայնակ ննջում:

Պարտիզանները մոտեցան ծառին,  
Մոտեցան ծառին և լուռ կանգ առին:

Նոճենու ներքև՝ անտառի խորքում —  
Փոքրիկ ոռւս տղան մտել էր խոր քոնս:  
Քնել է հոգնած, քնի մեջ անգամ  
Մտածում է նա իր քրոջ մասին,  
Կրծքին է սեղմել տարաբախտ մանկան,  
Խոր կարեկցությամբ, սիրով անբասիր:  
Պարտիզանները կանգնել են տրտում,  
Եվ սրտամորմոք պատկերն են դիտում:  
Ահա պատանին հառաչեց, հեաց,  
Արթնացավ, բացեց աչքերն ու փակեց.  
Աչքերին դաժան տեսիլք երևաց,  
Հանկարծ ցասումով նա տտքի ցատկեց:  
Բայց աչքերն ահա զարմանքով թարթեց,  
Ռուս մարդկանց տեսավ վանյան, հանդարտվեց:

Վանյան պատմում է հուզված, կցկտուր  
Գյուղի անցքերից ու մերթ հեծկլտում:  
Դաժան ապանդի մասին է խոսում,  
Պատմում է զոհված մայրիկի մասին:

Պարտիզանները հետամ են, լսում —  
Դլխահակ, մռայլ կանգնած միասին:  
Վըրեժով վառվում են արտերը բոց,  
Պրկվում են նրանց բռունցքները գոց:  
Խմբի ղեկավարն անխոս մտեցավ,  
Գրկեց աղջկան դալուկ ու նիրհած,  
Առնական հոգում կրակ կա ու ցավ,  
Աչքերում, կարծես, արցունք երևաց:  
Շոյեց մանկիկին, դառնազին ժպտաց,  
Շուռ եկավ սրբեց իր աչքերը թաց:

Դու մանկի'կ անմեղ, դու ծաղի'կ հեզիկ,  
Միրունի'կ աղջիկ, տ'վ խոցեց քեզի:  
Փակվել են առմիշտ աչիկներդ դ զույգ,  
Ձեռքըդ չի փնտրի կուրծքը մայրական,  
Դու աղվափետուր թռչնի'կ թևազուրկ,  
Որսորդի նետից ընկած արնաքամ:  
Այդ ի'նչ որսորդ էր անհոգի, այդ ո'վ,  
Զարկեց քեզ, թռչնի'կ, թռնավոր նետով:  
Բորենին անգամ, մոլեգնած ու բիրտ,  
Թե քեզ հանդիպեր՝ կդառնար խաղաղ,  
Գթոտ ու քնքուշ կնստեր կողքիդ,

Կտենչար քեզ հետ ժպտալ ու խաղալ:  
Ճովողող թռչնի՛կ, քեզ ո՞վ սպաանեց,  
Քեզ սպաանողին ամո՞թ և անե՛ծք:

Զսպեց զեկալարն իր հուզմունքն անասնձ,  
Պարտիզաններին մեղմաճայն աստաց.

— Մեռել է արդե՞ն աղջիկը թիթեռ,

Ուսից վիրավոր և արյունաքամ,

Իսկ դժբախտ եղբայրն այդ շրգիտե դեռ,

Սպասում է նա զարթոնքին մանկան:

Աղջիկը լա՛վն էր, քնքուշ ու սիրուն,

Եղբայրը նրան շա՛տ շա՛տ էր սիրում:

Աղջկան թաղե՛նք այս ծառի ներքև

Հողը հայրենի թող գրկի նրան,

Նոճին թող երգի մայրական երգեր,

Արցունք թող թափի շիրիմի վրա:

Եվ մեզ հետ տանենք պատանի տրբին,

Թող լինի նա մեր հարազատ որդին:

Եվ վանյան զգաց՝ որ ի՛նչ որ ասին,

Վատ բա՛ն էր ասին քույրիկի մասին:

Առաջ խոյացավ, քրոջը խլեց,

Եվ ամուր սեղմեց կրծքին բաբախող,  
Մանկան թաթիկներն իր ծոցը դրեց,  
Նայում է նրան հոգատար վախով:  
Օրորում է հեզ քրոջ սիրասուն,  
Մազերն է շոյում տւ մեղմիկ ասում.

— Լսի՛ր, սիրունի՛կ, լսի՛ր, Մո՛ւրիչկա,  
Դու մի՛ վախենա՛, ես չեմ թողնի քեզ,  
Մայրիկը մեռա՛վ, հայրիկը չկա՛,  
Ես քեզ կպահեմ, քո եղբայրն եմ ես:  
Պարտիզանները, սրտերով բեկուն,  
Կալիս են լռիկ և խուլ հեկեկում:

Մի ծեր պարտիզան թիկնեղ, աժդահա  
Մտտեցավ տղին, խոսում է ահա.

— Դու ջահել ես դեռ, որդյա՛կ իմ, վա՛յնկա,  
Քեզ մի շարչարիւր սրտամաշ ցավով,  
Դեռ դու շատ կապրես, առջևդ կյանք կա,  
Կյանքում կտեսնես դեռ տւրախ, լալ՛ օր:  
Եկ գնանք մեզ հետ, եկ մեզ միացիր,  
Պարտիզաններիս վավա՛կը դարձիր:  
Քեզ կպահպանենք մոտիկից, հեռվից,  
Մինչև թշնամին ջախջախովի առմիշտ,

Հայրիկդ էլ արդեն ետ կգա կուվից,  
Կգնաք ձեր գյուղն ու կապրեք անովիշտ:  
Իսկ Մուրիչկային՝ այս անուշ մանկան  
Թաղենք, նա արդեն մեռել է, վա՛յնկա:

Վանյան սարսափով աչքերը շրոնց,  
Նայեց քույրիկին, ցնցվեց ու լոնց:  
Անշարժ քարացալ իր կանգնած տեղում,  
Աչքերը տենդով ու լայն բացվեցին,  
Շրթունքները փակ պրկվում են, դողում,  
Այտերն արցունքով մեղմիկ թացվեցին:  
Պարտիզանները փորեցին մի փոս  
եվ Մուրիչկային թաղեցին անխոս:  
Կանաչ տերևներ ու ճյուղեր գտան,  
Բերին շիրիմի վրա փրոնեցին,  
Շրջապատեցին հողաթումբը թարմ,  
Կանգնեցին զգաստ ու երդվեցին:  
— Մո՛ւրիչկա, հանգչիր դու հողի ներքո,  
Երդվո՛ւմ ենք լուծել սուրբ վրեժը քո:


Չոքել է Վանյանս կողքին շիրիմի,  
Ա՛խ, քույրը հողում մենակ է հիմի:

1214  
A 6099

Տղան ասում է ձայնով աղեկեզ.  
— Մո'ւրիշկա, ես քեզ միշտ կգամ այցի,  
Ուր էլ որ լինեմ, շեմ մոռանա քեզ,  
Սպասիր, քո'ւյրիկ, իմ վերադարձին:  
Թողեց քույրիկին՝ հողի ավարին,  
Կանգնեց, մոտեցավ նա ղեկավարին:  
— Քեռի', կտա'ս ինձ հրրացան, նոնակ,  
Ես քաշ կլինեմ, թե կուզես՝ փորձիր:  
Ղեկավարն ասաց — Վա'նյուշկա, գնա'նք,  
Ղու օգուտ կտաս մեր արդար գործին:  
Վանյային տարան, խմբի հետ գնաց,  
Անտառում փոքրիկ մի շիրիմ մնաց:

5

Մի պարտիզան կա անոմը Վանյա,  
Մի տղա է նա տասներեքամյա:  
Դեռ մատղաշ է նա, վտիտ է, սակայն  
Դեմքը՝ լուրջ, կեցվածքը՝ հերոսական,  
Անհոգ, երջանիկ օրերը կորան,  
Զորս կողմը նրա բուք է ու բորան:  
Պատանին պետավ տառապանք ու ցավ



Եվ ցածի բուլում կտիվեց, կարծրացաւի:  
Այժմ նրա մռայլ հոգու հատակում  
Վըրեժի կայծակն է փայլատակում:  
Ու դարձել է նա հետախույզ հիմա,  
Պարտիզանների սիրելին է նա:  
Ծոցում նոնակներ տնի մահ ցանուղ,  
Զինված է կարճչիկ մի հըրացանով:

Է՛խ, փոքրիկ տղա աշքերով լազուր,  
Մութ գիշերներին այդ ո՞ւր ես վազում.  
Եվ կամ ժամերին լույս՝ ցերեկային—  
Մագլցում ես վեր ծառերի ծայրին:  
Է՛խ, դու ոուս տղա խարտջաշ ու սիրուն,  
Զոքում ես, ինչո՞ւ, խոր ու փոսերում:  
Ինչո՞ւ պահվում ես ճամբի մոտ՝ առնում,  
Երբ ձայն ես լսում՝ ինչո՞ւ ես լարվում,  
Ինչո՞ւ շրջում ես դու շուրջը գյուղի,  
Այդ ո՞ւմն ես դիտում դու փաղտագողի:  
Է՛խ, թախժոտ տղա դու մանկահասակ,  
Պատանեկությունդ ո՞վ խլեց, առա՛:  
Այն ո՞վ ամպոտեց հոգին քո պայծառ,  
Եվ դընացիր դու պարտիզան դարձար:

Յերեկ ու գիշեր մարտ է տևական.  
 Տանկերի զարկից գետինն է թընդում,  
 Սափառնակներն են վերից հըռընդում,  
 Հեռու ոռնում են և արկ և ակամ:  
 Այդ հզոր բանակն և սովետական  
 Թշնամուն չարդում և հետապնդում:

Իսկ գերման զորքի թիկունքում խարխուլ  
 Ծանոթ խումբը մեր պարտիզանների  
 Զարկում է, տրսում է գազաններին—  
 Գերման զորքերին սլայրագ և հախուռն:  
 Սարսափի, ահի, մահի մեջ պահում  
 Նրանց վաշտերին և հազարներին:

Գնում է Վանյան ճահճուտով տղմուտ  
 Հետախուզության՝ զգուշ և արթուն,  
 Խավարի գրկում ճամբա է հարթում,  
 Քայլում անտառով ծառախիտ ու մութ:  
 Վանյան իր գործին գիտակ է, հմուտ.  
 Դժվարին ճամբան նրան շի հաղթում:

Անտառի միջով քայլում է անառձ,  
Հայացքը հատած շուրջը՝ իտալարին.  
Ահա մոտեցավ իր ծանոթ վայրին,  
Իր Մուրիչկայի շիրիմն է ահա:  
Շիրիմի վրա կանգնել է պահակ  
Ծանոթ նոճենին գթառատ, բարի:

Նստեց մենավոր գերեզմանի քով  
Հետախուսյալ տղան լռախոհ ու լուրջ,  
Աչքերում ցոլաց անրջանք մի մոռնջ  
Եվ սիրտը կրկին պարտավեց մեզուվ:  
Շիրիմն է շոյում դողդողուն ձեռքով,  
Կալում է ահա՛ մի նվաղ մրմոռնջ:

— Քեզ այցի եկա, շսջում է նա,  
Քեզ շեմ մուռացել, իմ քույրի՛կ անամեղ,  
Ինձ համար դու միշտ կմնաս անամեռ,  
Մայրիկն էլ նույնպես անամեռ կմնա:  
Եղբայրդ հիմի քաջ է, անխնա,  
Գիտե թշնամուց միշտ վրրեժ հանել:

Դեպ հայրենի գյուղն է ձգվում ուղին,  
Քայլում է վանյան, սողում սողեսող,

Յատկում է զգուշ իմքերով, փոստով,  
Քայլում է կրկին համարձակ, ուղիղ:  
Ահա՛ մոտեցավ սիրելի գյուղին,  
Ահա՛ կեչիներն ու առուն հոսող:

Կանգ առավ տղան: Խորունկ հետցով  
Շունչ քաշեց՝ այնտեղ գյուղի վերևում:  
Դալուկ երեսին վիշտ է երևում,  
Սնքերը կարծես վառվում են բոցով,  
Հուշերը հոգին իր ալեկոծող  
Հորձանք են տալիս հորդ ու երբեմն:

Այստեղն էր ահա: Մահավայրն է սա,  
Օ՛, արյունոտ հուշ դաժան սարսափի,  
Հիշում է վանյան, մարում էր արմին,  
Բարձրացավ զարկված դիերի մի սար:  
Դիակույտից նա դուրս եկավ, տեսավ  
Սափանված իր մորն այս առիթ ափին:

Պարտիզան տղան քայլում է նորից  
Խավարում սմբած գյուղի փողոցով,  
Լույս է երևում տժգույն, դողոցով—

Գլուղի դպրոցի լուսամուտներից:  
Ու մի քիչ հեռու ծանոթ տներից  
Երգեր են լսվում խապոտ ոռնոցով:

Պատանին՝ սրբես մի ոգի անգո—  
Չուրված գիշերվա անթափանց մութին,  
Հպվեց դպրոցի մի լուսամուտին:  
Լուսամուտն ահա՛ ցածլիկ և անքող,  
Թախծում է լույսի դեղին երանգով,  
Նայում է տղին՝ իր հին ծանոթին:

Ներս նայեց վանչյան լուռ, ուշիուշով,  
Ահա դպրոցի դահլիճն է սնտեր,  
Մղկտում է մի թիթեղյա կանթեղ  
Նվ բեկբեկում է վտիտ լույս ու շող:  
Քողված սիգարի ծխի մշուշով  
Նստել են ֆաշիստ սպաներ այնտեղ:

Նայում է նա զուսպ և գաղտագողի:  
Գերման սպաներն ահա դահլիճում  
Թքում հատակին, ծխում են, վիճում,  
Ճշում են, ոռնում և խամում օղի:

Պղծում են նրանք դարոցը գլուղի,  
երգում են լկտի երգ ու քրքրում:

Հանկարծ սարսուռաց պատանին տոկոն,  
Ետևից մի ձեռք իր թևը սեղմեց,  
Ճնշումի ցավից պատանին դեղնեց,  
Այդ ձեռքը կարծես իր թևն է պոկում:  
Կարծես Վանյայի ուսին է շոքում  
Մի գաղան վայրագ, մարդակեր և մեծ:

Ժամապահ՝ զինվորը գերմանացի  
Բռնել է ամուր խիզախ պատանուն,  
Հրելով նրան այն տ՛ւր է տանում—  
Մեջքին տեղալով հարված և քացի:  
Թվաց թե մեջքին իջավ սուր կացին  
Եվ կամ թե պալթեց արև հրետանու:

7

Զինվորը կանգնեց դահլիճի դռան,  
Տղին ներս հրեց և դուռը գոցեց.  
— Կուսամուտի մոտ բռնեցին սրան,  
Ժամապահն զգաստ ու կարճ զեկուցեց:

Շուռ եկավ և դուրս գնաց դահլիճից,  
Դահլիճում թողեց տղին ակնապիշ.  
Սպանեին անփութ Օղի կուլ տվին,  
Տղին նայեցին հայացքով լավիշ:

Է՛խ, գյուղի դարձո՛ց, թափո՞ւր ես հիմի,  
Զկա՛ տասուցիչ, ոչ էլ աշակերտ,  
Զի հնչում այստեղ անմահ Պուշկինի  
Լեզուն հրաշոճնչ և հրաշակերտ:  
Խուժել են ահա գյուղի դպրոցում  
Մարդաճիվաղներ գոեհիկ, նվաստ,  
Լիտի մորուցքով պղծել են փորձում  
Տաճարը լույսի վեհ ու խորհիմաստ:

Կանգնել է վանյան հանգիստ ու վատահ,  
Նայում է հարբած այն սպաներին,  
Կարծես ճանաչում է այնտեղ նստած  
Միքանի տիեղձ մարդասպաններին:  
Հարկավ հիշում է, ա՛յ այն երեքին  
Լավ է ճանաչում, նրա՛նք են, նրանք  
Գյուղացոց վրա՝ առվի եզերքին՝  
Գնդացիներն էից թափեցին կրակ:

Հիշեց մայրերին, ծերերին դողդոջ  
եվ մանուկներին գնդակահարված,  
հոցված քույրիկին իր նորաբողջոջ  
Անշունչ մայրիկի կրծքին ծվարած:  
Եվ ատելութունը ցասման հրով  
իր ծփանքի մեջ առավ պատանուն,  
Ոնց որ օվկիանի հորձանքը խրտով  
Ամրակոու նստվին քշում է տանում:

Ձգում է վանյան ու վատահ է նա,  
Որ չի՛ ազատվի այլևս կենդանի,  
Երջանիկ և սուրբ այն ժամն է հիմա  
Որ մոր ու քրոջ վրեժը հանի:  
Վա՛նյա, մոտեցավ ժամը բաղձանքիդ,  
Եղիր համարձակ, եղիր անխնա,  
Հոգ չէ, թող հանգչի արևը կյանքիդ,  
Վրեժըդ լուծիր ու մի վախենա:

— Հը՛, ոսի՛ տղա, վախկոտ կաշաղա՛կ,  
Անո՞ւնըդ, ո՞վ ես, որտեղի՛ց եկար,—  
Հանկարծ մրթմրթաց մի սպա ճաղատ  
Ռուսերեն լեզվով կցկտուր և կաղ:

Պատանին ասաց. — Անունս է Վանյա,  
Ծնվել եմ այստեղ, այ հենց այս գյուղում,  
Ձեր երկրին կոչում էինք Գերմանիա,  
Իսկ դուք ի՞նչ տանեք այստեղ, մեր հողում:

Ասաց ու նայեց շեշտակի նրանց,  
Նրանց դեմքերին մոլուցք կա, գրպիւ.  
Մեկը հայհոյեց, մեկը հրհռաց,  
Իսկ ճաղատ սպան մրթմրթաց կրկին.  
— Օ՛հո, կեցցե՛ս դու, քաջ տղա ես մի,  
Հարկավ մեզանից չկա քեզ վնաս,  
Մի քանի ցուցմունք կտաս մեզ հիմի,  
Ու քեզ կարձակենք ազատ կանաս:

Դուռ է պատանին և կանգնել է վեա,  
Բոցավառվել են աչքերն իր արթուն,  
Ու մտածում է. — է՛իս դու նենգ աղվե՛ս,  
Ձուր փորձում ես ինձ գցել թակարդում:  
Վանյան չի խաբվի, փորձառու է նա,  
Պարտիզան է նա կուռ և քաջարի,  
Երգվել է, երգման հաստատ կմնա,  
Իր հայրենիքին չի դախաճանի:

— Զավա՛կս, ամուր կաց, անվեհեր եղիր,  
իր մայրն է կարծես հուշիկ շնջում:

— Վա՛նյուշկա, վրեժ լուծիր ու մեռիր,  
կարծես իր տանկիստ հոր ձայնն է հնչում:  
Վանյային թվաց՝ համբուրում է ջերմ  
իր Մուրիչկային, գրկել է նորից.

— Սիրելի՛ քույրիկ, ես եղբայրդ չեմ,  
թե վրեժ չառնեմ թշնամիներից:

— Հը՛, ոսի՛ տղա, խոսենք քո մասին,  
Անունդդ Վանյա, գեղեցի՛կ անուն,  
Ծնվել ես կարծեմ, այս գյուղում՝ ասիր,  
Մայր ունե՞ս, իսկ հայրդ ի՞նչ գործ է անում.  
Հարցեր է տալիս ահա նույն սպան:  
Վանյան հայացքով դահլիճն է չափում,  
Եվ հոգում գայրույթը հազիվ զսպած,  
Ձեռքով իր կուրծքն է ծածուկ շոշափում:

Ետ քայլեց, կանգնեց և պատասխանեց,  
Խոսեց նա հպարտ, սառնարյուն, հանգիստ.

— Քառասուններեք ֆաշիստ սպանեց  
Ռազմաճակատում իմ հայրը տանկիստ:

Ես մայր ունեի և մի քույր անգին  
Եվ հարևաններ՝ մայր, մանուկ և ծեր,  
Դուք ապանեցիք նրանց ամենքին,  
Պարտիզան դարձա, որ վրրեժ լուծեմ:

Հարց տվող սպան մուկգին մոռաց:

— Քեզ պե՞տք է կարգին ջարդել, դնքստել:  
Չեոքը ծոց տարա՞վ վանյան և գոռաց:

— Հե՛յ, շըշարժվե՛լ, ձեռներ վե՛ր, նստե՛լ:  
Եվ ծոցից նռնակը դուրս հանեց նա,  
Իսկ սպաները սմքեցին ահով:

— Շների նման կատակեք հիմա,  
Իսկ ես կմեռնեմ հերոսի մահով:

Նռնակը թռավ թափով սրընթաց,  
Դահլիճում լավեց ուժգին դղրդոց,  
Գետինը ցնցվեց, ինչ որ զբրընգաց,  
Բարձրացա՛վ փոշի, ծուխ, հրդեհ և բոց:  
Գետին են փռվել անշունչ իրար քով  
Տասներեք սպա՝ տասներեք փազան,  
Ընկել է այնտեղ հերոսի փառքով  
Տասներեքամյա մի ոռա պարտիզան:

Ամպ ու դամպ օր է: Գյուղը նըվաղուն:  
 Կեսօր է, բայց դեռ անձրև է մաղում:  
 Այս մռայլ ժամին, այս մառախուղին,  
 Երգեցին հանկարծ արկ ու գնդացիր,  
 Նոնականեր հուժկու թափով թնդացին:  
 Պարտիզանները տիրացան գյուղին:

Պարտիզանները թշնամուն խոցող,  
 Ահա քայլում են գյուղի փողոցով,  
 Փողոցը դեպի դպրոցն է տանում:  
 Միքանի մարդիկ՝ գյուղում մնացած,  
 Պարտիզանների խմբին միացան—  
 Այցի են գնում հերոս պատանուն:

Ներս մտան: Այստեղ դպրոցն է թափուր,  
 Ահա դահլիճը դարձած կիսափող.  
 Տասներեք դիակ թշնամու: Արյուն:  
 Ահա պատանին: Դիակը նրա:  
 Արյան մեջ փռված հատակի վրա  
 Առյուծ հոր որդին՝ մի անվախ կորյուն:

Եվ ծոնկ շոքեցին մարդիկ համբր-մունջ:  
Ու մարդկանց միջից լավեց մի մրմունջ.  
— Փա՛ռք ու պատի՛վ քեզ, սիրելի Վա՛նյա,  
Քեզ չի մոռանա երկիրն ուռածական:  
Անմահ ես մահով քո հերոսական,  
Ո՛վ քաջ պատանի տաններեքամյա:

9

Մի գերեզման կա անտառի խորքում,  
Նոճենու ներքև մի գերեզման կա,  
Այնտեղ գիրկ գրկի մտել են խոր քուն  
Փոքրիկ Մուրիչկան և հերոս Վայնկան:  
Նոճենու ներքև մի գերեզման կա,  
Այդ նվիրական սրբավայր է մի,  
Չեն պղծի նրան այժմ գերմանական  
Մարդաճիվաղներն անխիղճ, վայրենի:

Անցո՛րդ, տեսնում եմ քեզ այս անտառում,  
Կանգնեցիր ահա շիրիմի կողքին,  
Զերմ հիացմունքի հրդեհ է վառում  
Վրբեժի պապակ քո հախրտ հոգին:

Արբաւայր է մի գերեզմանն աչդ վեհ,  
Կանգնիր դու հպարտ, վշտից մի' դողա,  
Տե՛ս, հավերժորեն ապրում են աչդտեղ  
Մի փոքրիկ աղջիկ, մի հերոս տղա:

1942 մաս

Երևան



ԱՅԱՏ ՎՍՏՄՈՒՆԻ  
**Когда сверкает молния**  
(на армянском языке)  
Армгиз, Ереван, 1942

Պատ. խմբագիր՝  
Գ. ՍԱՐՅԱՆ,

ՎՖ 2782. Պատվեր 387. Տիրաժ 3000.  
Տպագրական 2 մամ. Ստորագրված է  
տպագրութան 6/VI 1942 թ.

---

Հայպետհրատի տպարան, Երևան, Լենինի 65


ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0041871

[074]

ԳԻՆԸ 1 [Ռ. 70 ԿՈՊ.



Շարիկը  
Բ. Մազմանյանի

ԱՅԱԴՆՅՏՄԱՆԻ  
Когда сверкает молния  
(На армянском языке)  
, Ариэль, Ереван, 1942 г.